

լրանար, տունէն գուրս չէին հաներ, իսկ այժմ երկու շաբաթական երախան անգամ բժիշկին մօտ կը բերեն, խորհուրդ հարցնելու:

Մեր հայ մայրերը հասկցած են այլեւս թէ պէտք է ժուժով կերակրել երախան, այնպէս որ քիչցած են ստամոքսի և աղիքներու հիւանդութիւնները, փսխող մանուկներուն թիւը»:

Եւ բժիշկը գովելով հայ առաջադէմ ու զարգացած մայրերը, կը վերջացնէ իր յօդուածը, գոչելով.

«Կեցցե՛ն մեր թոմարուլիկ երախաները»:

(Յաջորդով՝ Մայրութեան եւ մանկութեան եռօրեակը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԱԲԻՅԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ



Սոյն թւի Յունարի վերջին երևանում կայացաւ Հայաստանի երկրորդ մալարիական համագումարը, որը տեւեց Յունարի 25-29 և ունեցաւ ընդամէնը 9 նիստ (ցերեկը և երեկոյան)։

Համագումարին ներկայ էին հակամալարիական ճակատում աշխատողները և բազմաթիւ հիւրեր, ի թիւս որոց Վրաստանի Հանրապետութեան Առողջապ. Ժողովրդական Կոմիսարիատի ներկայացուցիչը և Անդրկովկասի երկաթուղու բժշկական վարչութեան ներկայացուցիչները:

Համագումարին ներկայացած էին 32 զեկուցում, բոլորն էլ նւերած մալարիայի և տրոպիկական այլ հիւանդութիւններին, զեկուցումներ լինեցին մեծ մասը չրջաններից էր և վերաբերում էր գիւղական վայրերի ազդեցնեցութեան հետազոտմանը, տրոպիկական հիւանդութիւններին նկատմամբ: «Բուժանքի» սուղ էջերը թոյլ չեն տալիս մեղ մի առ մի կանգ առնել բոլոր զեկուցումների վրայ. մենք հնարաւոր թիւն չունենք անգամ թւել նոյնիս՝ զեկուցումների վերնագրերը և նրանց առիթով հանած բանաձևերը: Բայց և այնպէս չենք կարող չբերել այստեղ Բժ. Փիրումանի զեկուցման առիթով հանած բանաձևը, որն ամբողջովին պատկերացնում է մալարիայի դէմ տարւող պայքարը Հայաստանում. Բժ. Փիրումանը Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան Առողջ. Ժողով. Կոմիսարիատի սանիտարական-համաճարակագիտական բաժնի վարիչն է և այդ բաժնի մէջ են կենտրոնացած Հայաստանի տրոպիկական և այլ տարափոխիկ հիւանդութիւնների ուսումնասիրութիւնը և նրանց դէմ տարւող պայքարը:

Ահա բանաձևը.

Համագումարը, լսելով Բժ. Փիրումանի զեկուցումը, որոշեց, որ

մալարիայի և տրոպիկական այլ հիւանդութիւնների գէժ յաջող մաքանելու համար անհրաժեշտ է՝

- 1.— Կենտրոնացնել այս հարցերի վրայ բոլոր պետական և հասարակական հիմնարկների և կազմակերպութիւնների ուշադրութիւնը.
- 2.— Օրէնսդրական կարգով տրոպիկ-հիւանդութիւնների գէժ պայքարին մասնակցելու հրաւիրել այն բոլոր պետական և հասարակական մարմինները, որոնք առնչութիւն ունին ժողովրդական տնտեսութեան հետ.
- 3.— Տրամադրել այդ պայքարի համար յատուկ միջոցներ:
Այս վերջին նպատակի համար համազումաբը գտաւ անհրաժեշտ՝
- ա.— Աւելացնել պետական, տեղական և կարմիր խաչի բիւջէյով նիւթական յատկացումները, մանաւանդ պրոֆիլակտիկ բնոյթի ձեռնարկումների վերաբերեալ.
- բ.— Առաջադրել տնտեսական ձեռնարկումներին՝ իրենց գրաւած տարածութեան առողջացման համար դումարներ յատկացնել.
- դ.— Տրոպիկական հիւանդութիւնների գէժ պայքարի վրայ կատարուելիք ծախսերին հրաւիրել մասնակցելու բոցիսլական ապահովագրութեան մարմիններին.
- դ.— Աւելացնել սոցիալակ. ապահովագր. գծով տրուելիք այն դումարները, որոնք յատկապէս ծախսուելու են տրոպիկական հիւանդների բուժման համար.
- ե.— Մալարիական տեղերից ստացւած զիւղատնտեսական նիւթերի վրայ գնել փրատուրք, որը նոյնպէս յատկացուելու է տրոպ. հիւանդութիւնների գէժ պայքարին.
- 4.— Ուժեղ զարկ տալ պրոֆիլակտիկ ուղղութեանը և առանձին ուշադրութիւն դարձնել այն միջոցների վրայ, որոնք ունին արմատական նշանակութիւն մալարիայի ոչնչացման համար.
- 5.— Ուժեղացնել և միւս տրոպ. հիւանդութիւնների գէժ պայքարը.
- 6.— Հետազոտել տրոպ-հիւանդութիւնների տարածւած վայրերի ազդարանութիւնը, մանաւանդ լեռնաարդիւնաբերական շրջաններում.
- 7.— Բացել նոր կայաններ, բայց առանց մահճակալների, որ տրոպիկ. հիւանդութեան գէժ մաքառող կայանը հիւանդանոցի բնոյթ չստանայ.
- 8.— Կարգադրել, որ տրոպկայանները զբաղւեն միայն տրոպհիւանդութեան գէժ տարւելիք պայքարով.
- 9.— Ուժեղացնել տրոպիկ. ինստիտուտի և տրոպկայաններում որակեալ աշխատողների թիւը.
- 10.— Կազմել կարճատե. դասընթացներ տրոպկայաններում աշխատողների վերապատրաստման համար.

- 11.— Գործուղղել տրուպինատիտուտի աշխատակիցներին տրուպի-
յանները՝ ղեկավարելու վերջիններին աշխատակիցների գործու-
նէութիւնը.
- 12.— Սերտ կապ հաստատել Անդրկովկասեան հանրապետութիւնների
այն հիմնարկների հետ, որոնք նոյնպէս մաքառում են տրու-
պիկ. հիւանդութիւնների դէմ:

Արժանի են յիշատակման և հետեւեալ ղեկուցումները.— Բժ. Տէր
Մաթէոսեանի՝ «Աղիքների պրոտոզորական ինֆեկցիաների պարազի-
տոլոգիայի և էպիդէմիոլոգիայի ուսումնասիրութիւնը». բժշկուհիներ՝
Քալանթարեանի, Կորիմազեանի և Անանեանի «Ճիճուային հիւանդու-
թիւնները Հայաստանում». բժշկուհի Անանեանի «Ջալթուկի ցանքերի
նոր ձևի ոռոգումը». Հայաստ. ջրային տնտեսութեան ներկայացուցիչ
Թաւաթեանի ղեկուցումը՝ «Ճահիճների չորացումը Հայաստանում»:
Խանդամիրեանի ղեկուցումը՝ «Յունաստանից եկած դաղթականու-
թեան խիինացման փորձը Արազդայանում»:

Համագումարի վերջում եղաւ Խորհրդ. Հայաստանի Ժողով. Կո-
միտարների Խորհրդի նախագահ Բժ. Համբարձումեանի ղեկուցումը՝
«Ներկայ քաղաքական դրութիւնը»: Այս ղեկուցման առթիւ համա-
գումարը որոշեց՝ կանգնել աշխատաւորական պետութեան պաշտպան-
ների առաջին շարքերում, եթէ զինւած յարձակում կը սպառնայ մեր
Միութեանը:

Համագումարը ցրուեց բարձր տրամադրութեան տակ:

Երեւան

Բժ. Ա. ՄԵԼԻՔԵԱՆ

ՓԱՐԻՋԻ ԲԵԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Բժշկական Միութիւնը իր ամսական նիստը գումարեց մարտ
23ին՝ նախագահութեամբ՝ փոխ-նախագահ՝ Տոքթ. Արթէնի: Ներկայ
էին 17 անդամներ, ուս. Միութեան Ղիմուսին վրայ, Բժշկ. Միու-
թիւնը որոշեց մասնակցի Ապրիլ 11/24ի Խզաթանդէսին:— Միութեան
Ծրագրի եւ կանոնագրի վերաքննութիւնը արդիւնաւոր կերպով շա-
րունակելու համար, յանձնախումբ մը ընտրուեցաւ:— Փարիզի մէջ
գտնուող եւ գործելու արտօնութիւն չունեցող հայ արուեստակից-
ներուն համար, գաղութին մէջ բժշկութիւն ընելու Թոյտուութիւն
ձեռք բերելու նպատակաւ պաշտօնական մարմիններու մօտ Ծրա-
գրուած դիմումը անպատեհ նկատուեցաւ շահագրգռող արուեստա-
կիցներուն կողմէ՝Տոքթ. Վ. Յ. Թորգոմեան շահեկան դասախօսութիւն
մը կարդաց «Փարիզի համալսարանին առաջին հայ ուսանողին (Յա-
րութիւն Պալեան) եւ արեւելքի մէջ ֆրանսերէն լեզուով բժշկութեան
ուսուցումին մասին»: